# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«25» 09 2019թ. N:216 ք.Գյումրի

«ԳՅՈՒՄՐՈՒ ԻՆՖԵԿՑԻՈՆ ՀԱԿԱՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈԶԱՅԻՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտի ձեռնարկների և ներքին աուդիտի կանոնակարգի մշակման ուղեցույցերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 934-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 143-Ն հրամանի 177-րդ կետի:

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետներ Բարսեղ Քոչարյանին, Արտակ Հայրապետյանին, Սամվել Հարությունյանին և առաջատար մասնագետի ժամանակավոր թափուր պաշտոնը ժամկետային աշխատանքային պայմանագրով ուսուցանվող աուդիտորի կարգավիճակով զբաղեցնող Միեր Հարությունյանին՝ 2019 թվականի սեպտեմբերի 26-ին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու ինֆեկցիոն հակատուբերկուլյոզային հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերությունում իրականացնել համապատասխանության աուդիտ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին ուղղված (մտից 14158-19, 18.09.2019թ.), «Գյումրու ինֆեկցիոն հակատուբերկուլյոզային հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերության աշխատակից Վերժինե Գրիգորի Մինասյանի դիմումում նկարագրված հարցերի վերաբերյալ և կազմել աուդիտի ուսումնասիրության վերաբերյալ համապատասխան տեղեկանք:

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է